# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՎՇՈՒՏԻ
# ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Թավշուտ համայնք, հասցե Շ.Մ.գ.Թավշուտ
հեռախոս 093 888.355, էլ. փոստ surenssa@mail.ru

21 օգոստոսի 2015թ.
№27.

ՀՀ Շիրակի մարզպետ
Պարոն Ֆ.Ցոլակյանին

Ձեզ ենք ներկայացնում Շիրակի մարզի Թավշուտ համայնքի ավագանու թվով մեկ որոշում:

Թավշուտ համայնքի ղեկավար [signature] Ս.Սարգսյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 7729-15
«21» 08 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՎՇՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 9-Ա

«15» օգոստոսի 2015 թվական   գ. Թավշուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՎՇՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի Օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի Օգտագործման ժամանակավոր Սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 109 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից 10.2078 հա արոտ (կադաստրային ծածկագիր՝ 08-041-0113) փոխադրել անտառային հողերի կատեգորիա՝ <<Հայանտառ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից անտառ հիմնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտի գյուղական համայնքի ղեկավար Սուրեն Սարգսյանին՝

1) ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝

ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ կողմ --------------------

ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ՝ կողմ --------------------

ՆՈՒՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ՝ կողմ --------------------

ՌԱԶՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ՝ կողմ --------------------

ԷԴԳԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ՝ կողմ --------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

15 օգոստոսի 2015 թվական
Գ.Թավշուտ